ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. նոյեմբերի 21-ից 23-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Սոչի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>
   Հակոբ Վարդանյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Սոչի նոյեմբերի 21-23-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>
   «Ռոսատոմ» պետական կորպորացիայի տնօրինություն

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>
   Մասնակցություն «Ատոմէքսպո 2022» միջազգային համաժողովին

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>
   «Ռուսատոմ Էներջի Փրոջեքթս» ԲԸ ղեկավարության հետ աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում ատոմային էներգետիկայի նոր օբյեկտի կառուցման նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման (նախ-ՏՏՀ) մշակման հետ կապված հարցեր: Ընդգծվել է այս ուղղությամբ համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը՝ 2022թ. դեկտեմբերի վերջին-2023թ. հունվարի սկզբին նախ-ՏՏՀ-ի մշակման ավարտն ապահովելու համար:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

   Մասնակցել եմ ցուցահանդեսի բացման արարողությանը, համաժողովի լիագումար նստաշրջանին և այցելել ցուցահանդեսային տաղավարներ: Ինչ վերաբերում է առավել հետաքրքիր ցուցանմուշներին, ապա ձեռք են բերվել տեխնիկական, տեխնոլոգիական և կոնտակտային տվյալներ՝ հետագա քննարկման և գնահատման համար:

   Աշխատանքային հանդիպում եմ ունեցել «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել են ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հետ կապված հարցերը: Հնչել են հայկական և ռուսական կողմերի դիրքորոշումները թեմայի վերաբերյալ, ինչի արդյունքում

նպատակահարմար է համարվել շարունակել խորհրդակցությունները այդ դիրքորոշումների համաձայնեցման համար: Մասնակցել եմ նաև ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված հարցերի շուրջ փորձի փոխանակման նպատակով կազմակերպված համաժողովին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պաշտոնական հանդիպում եմ ունեցել «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ա. Լիխաչովի հետ: Ընդգծվել է ատոմային էներգետիկայի ոլորտում հայ-ռուսական երկարամյա համագործակցության արդյունավետությունը և նախանշվել դրա շարունակման ու ընդլայնման հեռանկարները:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի տեղակալ Ն. Սպասկիի հետ քննարկվել են Հայաստանում ատոմային էներգետիկայի նոր օբյեկտի կառուցման «ճանապարհային քարտեզ»-ում առաջարկված միջոցառումների բովանդակությունը և դրանց իրականացման ժամկետները: Ձեռք է բերվել այս ուղղությամբ հայկական և ռուսական կողմերի դիրքորոշումների ըմբռնում և առաջարկվել է համապատասխան ճշգրտումներ կատարել այդ փաստաթղթում:

Աշխատանքային հանդիպում եմ ունեցել «Տեխսնաբէքսպորտ» ԲԸ ղեկավարության հետ՝ աշխատած միջուկային վառելիքի հետ վարվելու հնարավոր մոտեցումները քննարկելու նպատակով: Նշվել է կողմերի հետաքրքրությունը՝ այդ թեմայով խորհրդակցությունները շարունակելու համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

28 նոյեմբերի 2022թ.